

ԵՂԻԱ ԳԱՍՊԱՐԵԱՆ  
ԵՐՈՒՄԱԴԵՍԻ ՄԷՁ

## ԱՆՁԵՐ

ՀԵՐՈՎԴԷՍ <sup>1</sup>

ՀԵՐՈՎԴԻԱՏ <sup>2</sup>

ՍԱԼՕՄԷ <sup>3</sup>

ՊԷՐՍԻԴԷ

ԵՐԱՍՏՈՍ

ՔՈՒՉԱ

ԵՐԵՔ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՆԵՐ

ԲԵՆԻԱՄԻՆ

ՉՕՐԱԿԱՆՆԵՐ, ՉԻՆՈՒՈՐՆԵՐ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Տեսարանը կը ներկայացնէ ընդարձակ սրահ մը. երկու դուռ, մէկը՝ դահլիճը, իսկ միւրը ներքնասենեակները սանոդ. դահլիճի անցքը վարագոյ-  
րով մը փոքուած է: Պատուհան մը հրադարակի վրայ նայող:  
Հանգստարանի մը վրայ Հերովդէս իշխանը կը բնանայ. անոր գլխուն  
ֆով խափեփիկ մը կանգնած հովհարով ճանճերը կը փախցնէ: Երասոսո՝  
գրելով զբաղած է: Սալօմէ դաստիարակն էր դուռ կը դիտէ: Հրադարակին  
մէջ՝ աղմուկ եւ իրարանցում:

ՁԱՅՆԵՐ - (Դուռէն) Պէտք է խաչուի... պէտք է խաչուի՛...

ՍԱԼՕՄԷ - Ինչո՞ւ խաչել կ'ուզեն... Ի՞նչ է անոր յանցանքը:

ԵՐԱՍՏՈՍ - (Գրելը կը դադրեցնէ) Կ'ըսէ՝ ինք Աստուած է...

ՍԱԼՕՄԷ - Աստուած...

ԵՐԱՍՏՈՍ - Շատեր կան իրեն հաւատացող:

ՍԱԼՕՄԷ - Կը փափաքիմ Աստուած մը տեսնել:

ԵՐԱՍՏՈՍ - Ես անգամ մը տեսած եմ դինք:

ՍԱԼՕՄԷ - Ո՞ւր:

ԵՐԱՍՏՈՍ - Գալիլիայի մէջ:

ՍԱԼՕՄԷ - Երիտասա՞րդ է:

ԵՐԱՍՏՈՍ - Այո՛:

ՍԱԼՕՄԷ - Իրեն հաւատացողներուն մէջ կիներ ալ կա՞ն...

ԵՐԱՍՏՈՍ - Շատ են... նոյնիսկ պոռնիկներ...

ՍԱԼՕՄԷ - Պոռնիկնե՞ր... բայց, հրեաներու Եհովան պոռնիկնե-  
րու հակառակ է:

ԵՐԱՍՏՈՍ - Այս՝ սիրով ու ներումով կը վերաբերի անոնց հետ...

ՁԱՅՆԵՐ - (Դուռէն) Պէտք է խաչուի՛... պէտք է խաչուի՛...

ՍԱԼՕՄԷ - Լսած եմ անոր մասին, կ'ըսեն՝ հրաչքներ կը գործէ:

ԵՐԱՍՏՈՍ - Շատ հրաչքներ գործած է, հիւանդներ բժշկած, կոյ-  
րերու աչքեր բացած, դիւահարներ ազատած. անդամալոյծ-  
ներ ոտքի կանգնեցուցած, բորոտներ մաքրած, հեղ մ'ալ հար-  
սանիքի մը մէջ ջուրը գինիի փոխած... նոյնիսկ մեռնալներ վե-  
րակենդանացուցած է...

ՁԱՅՆԵՐ - (Դուռէն) Պէտք է խաչուի՛... պէտք է խաչուի՛...

ԵՐԱՍՏՈՍ - Ըսողներ ալ կան, որ այս մարդը Յովհաննէսն է յա-  
րութիւն առած:

ՍԱԼՈՄԷ - Յովհաննէսը՞...

ՀԵՐՈՎԳԻԻՍ - (Ձղայնոս, ներհասնենալէն սոսի կու գայ) Ըսէ՛ք այդ ձայները դաղրեցնեն... ինչո՞ւ համար այդպէս կը պոռան... ըսէ՛ք հեռանան այդ տեղէն: (Սալօմէ կը խնդայ) Ինչո՞ւ կը խրնդաս, քանի անգամ ըսած եմ, երբ սիրտս նեղ է՝ մի խնդար...

ՍԱԼՈՄԷ - Քեզի ո՞վ կ'ըսէ այդպէս նեղուիս:

ՀԵՐՈՎԳԻԻՍ - Չէ՞ք լսեր անոնց ոռնոցը. եթէ իրարու ըսելիք մը ունին, կրնան մարդու պէս ըսել...

ՍԱԼՈՄԷ - Մարդու պէս կ'ըսեն, բայց հրեայ մարդու պէս. թող ուղածնուն չափ պոռան... անոնց պոռալը ինծի հաճոյք կը պատճառէ...

ՀԵՐՈՎԳԻԻՍ - Դուն զիս աւելի կը ջղայնացնես... դուն իմ բարկութենէս այ հաճոյք կ'առնես... (Կը կանչէ) Քուզա՛, Քուզա՛... (Քուզա դահլիճի դռնէն ներս կու գայ): Քուզա՛, ի՞նչ է դուրսի այդ աղմուկը, դաղրեցնել տուր անոնց ձայները... ըսէ՛ ձայներնին կտրեն, ըսէ՛ Հերովդէս իշխանը կը քնանայ... Եթէ անպատճառ պոռայ կ'ուզեն, ըսէ, թող ուրիշ տեղ երթան...

ՁԱՅՆԵՐ - (Դուրսէն) Պէտք է խաչուի՛... պէտք է խաչուի՛... պէտք է խաչուի՛...

ՀԵՐՈՎԳԻԻՍ - Որո՞ւ մասին է խօսքերնին:

ՔՈՒՉԱ - Յիսուսի, այն՝ որ կրտէ ինք Աստուած է:

ՍԱԼՈՄԷ - Երաստոս կ'ըսէ, կը կարծուի Յովհաննէսն է յարութիւն առած... Կրնայ ճիշդ եղած ըլլալ, այն մարդը սուրբ մարդ էր. քու պատճառովդ ես պատճառ եղայ անոր գլխատու մին...

ՀԵՐՈՎԳԻԻՍ - Ձայնդ կտրէ՛...

ՍԱԼՈՄԷ - Երանի թէ Յովհաննէսը եղած ըլլայ. ես չատ զղջացած եմ բրածիս, ես չատ չատ զղջացած եմ որ քու պատճառովդ անոր գլխատու մին պատճառ եղայ... Եթէ Յովհաննէսն է, կ'ուզեմ տեսնել զինք ու ներողութիւն խնդրել իրմէլ...

ՀԵՐՈՎԳԻԻՍ - Ձայնդ կտրէ կ'ըսեմ... դուն կ'ուզես՝ ես աւելի ջղայնոտիմ... ա՛խ, զլխուս ցաւը բռնեց... Եթէ Յովհաննէսն է, նորէն գլխատել կու տամ...

ՍԱԼՈՄԷ - Ի՞նչ լաւ պիտի ըլլար, եթէ իսկապէս Յովհաննէսը եղած ըլլար... Եթէ Յովհաննէսն է, կ'ուզեմ տեսնել զինք եւ

հարցնել իրեն, մահէն վերջը ի՞նչ կայ... Գիտեմ, Հերովդէս իշխանն այ պիտի ուղէ գիտնալ, թէ մեռնելէ վերջը ի՞նչ կ'ըլլանք...

ՀԵՐՈՎՂԻԻԱՏ - Ի՞նչ խնեթ բաներու մասին կը խօսիս. քանի քանի անգամներ ըսած եմ, իմ ներկայութեան մահուան մասին մի խօսիք... Ա՛յս գլուխս, հիմա պիտի պայթի գլուխս... Գուն կ'ուզես, ես ասանկ ջղային ըլլամ ու հիւանդանամ... Վաղը պէտք է մեկնինք ասկից. Երուսաղէմը չեմ սիրեր...

ՍԱԼՕՄԷ - Ես Երուսաղէմը չատ կը սիրեմ, հոս Գալիլիայէն լաւ է:

ՀԵՐՈՎՂԻԻԱՏ - Ըսի՛, Երուսաղէմը չեմ սիրեր, այստեղի հրեաները չատ աղմկոտ են... Գիտեմ, Հերովդէս այ չի սիրեր. այստեղ չատ ճանճ կայ...

ՍԱԼՕՄԷ - Գալիլիա այ չատ ճանճ կայ...

ՀԵՐՈՎՂԻԻԱՏ - Ինծի միշտ հակառակ կը խօսիս... ա՛յս գլուխս...

ՍԱԼՕՄԷ - Յիսուս հիւանդներ կը բժշկէ. ըսննք՝ թող գլխուդ ցար բժշկէ:

ՀԵՐՈՎՂԻԻԱՏ - Չեմ ուզեր...

ՍԱԼՕՄԷ - Ան չատ հրաշքներ գործած է, ամէն տեսակ հիւանդութիւններ բժշկած, նոյնիսկ մեռեալներ վերակենդանացուցած:

ՀԵՐՈՎՂԻԻԱՏ - Սո՛ւտ են, սո՛ւտ են...

ՍԱԼՕՄԷ - Իրեն ըսէ՛ք հայրս վերակենդանացնէ:

ՀԵՐՈՎՂԻԻԱՏ - Զայնդ կտրէ՛ (Կը նստի) հիմա պիտի մարիմ...

ԶԱՅՆԵՐ - (Դուռէն) Պէտք է խաչուի՛... պէտք է խաչուի՛...

ՀԵՐՈՎՂԻԻԱՏ - Այդ Յիսուս ըսուածը վտանգաւոր մարդ կ'ընրելի. հրեաները իրաւունք ունին, պէտք է խաչը հանուի...

ՀԵՐՈՎՂԻԵՍ - (Քունէն կ'արքննայ, գլուխը վեր կ'առնէ) Զայներնիդ կտրեցէ՛ք, չէ՛ք թողուր հանգիստ քնանամ...

ՀԵՐՈՎՂԻԻԱՏ - Ա՛յս գլուխս, հիմա պիտի պայթի գլուխս...

ԶԱՅՆԵՐ - (Դուռէն) Պէտք է խաչուի՛... պէտք է խաչուի՛...

ՀԵՐՈՎՂԻԵՍ - (Կը նստի) Ի՞նչ է այդ աղմուկը... Ո՞վ է խաչել կ'ուզեն...

ՍԱԼՕՄԷ - Յիսուսը...

ՀԵՐՈՎՂԻԻԱՏ - Լաւ կ'ընեն, պէտք է այդ մարդը խաչը հանեն:

ՀԵՐՈՎՐԷՍ - Յիսուսը՞... Այն Յիսուսը՞... Եթէ, բռներ են, բսէ՛ր  
 Հոս քովս բերեն, կ'ուզեմ տեսնել զինք:

ՍԱԼՕՄԷ - Իմ փափաքս ալ է անգամ մը տեսնել զինք:

ՀԵՐՈՎՐԷՍ - Տեսնել չեմ ուզեր... չեմ ուզեր Հոս գայ:

ՀԵՐՈՎՐԷՍ - Ո՞ր է:

ՔՈՒՉԱ - Պիղատոսի՛ քով տարին:

ՀԵՐՈՎՐԷՍ - Լաւ կ'ըլլար, Պիղատոս անոր զլուխը կտրել  
 տար...

ՀԵՐՈՎՐԷՍ - Բայց, ես կ'ուզէի անգամ մը տեսնել զինք:

ՍԱԼՕՄԷ - Ոմանք կ'ըսեն Յիսուսը ուրիշ մարդ չէ, եթէ ոչ՝ Յով-  
 Հաննէլ, սր յարութիւն առած...

ՀԵՐՈՎՐԷՍ - (Բարկացած, ձեռքով ձանձ մը կը փախցնէ) Այս ճանճե-  
 րը...

ՀԵՐՈՎՐԷՍ - Հոս շատ ճանճ կայ, այստեղէն երթանք, վաղը  
 Գալիլիա վերադառնանք: (Սալօմէ դէռի դաստիարակ կ'երթայ):

ՀԵՐՈՎՐԷՍ - Քեզի չստիպեցի Հետս գալու, դուն փափաքեցար,  
 եթէ կ'ուզէր՝ զագէր. դուն ու աղջիկդ վաղը իսկ Գալիլիա վե-  
 րադարձէր... Ես տակաւին շատ պործեր ունիմ կարգադրե-  
 լիք... Երաստո՛ս, կայսեր զրկուելիք նամակը գրեցի՞ր...

ԵՐԱՍՏՈՍ - Այո՛. Տէր իմ:

ՀԵՐՈՎՐԷՍ - Թող մնայ, մի՛ կնքեր, կրնայ ըլլալ կայսեր ուրիշ ը-  
 սելիքներ ունենամ: (Պերսիսէ դահլիճի դռնէն ներս կու գայ, խոհըր-  
 դաւոր ժողիս մը դէմին, խոնարհութիւն կ'ընէ ու մէկ անկիւնը կը կանգ-  
 նի... Քուզա դուրս կ'ելլէ) Ի՞նչ յուր, Պերսիսէ՛:

ՊԵՐՍԻՏԷ - Ոչինչ, մարդիկ Աստուած մը բռներ են՝ խաչել կ'ու-  
 զեն...

ՍԱԼՕՄԷ - (Ուրախ) Ի՞նչ լաւ եղաւ, ի՞նչ լաւ եղաւ. Հոս կը բերեն,  
 Յիսուս մեր տունը կը բերեն:

ՀԵՐՈՎՐԷՍ - Իրենց ո՞վ ըսաւ Հոս բերեն... այդ մարդը Հոս  
 պէտք չէ գայ... կ'ըսեմ այդ մարդը Հոս չպիտի գայ...

ՔՈՒՉԱ - (Դահլիճի դռնէն կու գայ) Տէր իմ:

ՀԵՐՈՎՐԷՍ - Ի՞նչ:

ՔՈՒՉԱ - Յիսուս Գալիլիացի ըլլալուն Պիղատոս Հոս զրկած է, ը-  
 սելով, Հերովդէս իշխանին կ'իյնայ գայն դատելը...

ՍԱԼՕՄԷ - *ԻՆչ լաւ եղաւ, իՆչ լաւ եղաւ* (Հայելիին դէմ կը կանգնի ու մազերը կը յարդարէ):

ՀԵՐՈՎԳԻԵՍ - *Նորէն կ'ըսեմ, այդ մարդուն երեսը տեսնել չեմ ուզեր...*

ՀԵՐՈՎԳԻԵՍ - *Եթէ տեսնել չես ուզեր, կրնաս սենեակդ քաշուիլ: Ուրեմն, Յիսուս Գալիլիացի՞ է:*

ՔՈՒՉԱ - *Այդպէս կ'ըսեն:*

ՀԵՐՈՎԳԻԵՍ - *Եթէ Գալիլիացի է, Պիղատոս օրինաւոր դործ բրած է: Եթէ Գալիլիացի մը դատել պէտք է, միայն ինծի իրաւունք կ'իյնայ դայն դատել... (Ոսֆի կ'ելլէ) Ո՞ւր է պատմուճանս, պատմուճանս տուէք: (Քուզա կը բերէ դաւածուակաւ դասմուճանը ու կը հագցնէ) Պէտք է արձանագրուի այս դատը: Երաստոս, պատրաստ եղիր արձանագրելու... Այս մասին Կեսարին այ պէտք է տեղեկութիւն տալ... Աթոս Հոս զրէ՛ք: (Քուզա արքողը կը բերէ ու կը տեղադրէ դահլիճի դրան դիմաց) Ըսէ՛ք բերեն: (Քուզա վարագոյրը կը բանայ ու դուրս կ'ելլէ: Հեռվդես կը նստի արքոյի վրայ: Հեռվդիաս կը քաշուի մէկ անկիւնը: Սալօմէ կը կանգնի Հեռվդեսի մօտ: Դահլիճի մէջ աղմուկ մը ծայր կու տայ. երկու գօրականներ կու զան ու կը կանգնին դրան երկու կողմերը: Եւրբ քահանայադէսներ կու զան ու խոնարհութիւն կ'ընեն: Ա. քահանայադէսը ձեռքին ունի ձեռնակ լաթի մը մէջ փաթթուած մագաղաթեայ խոցոք գիրք մը, օրէնքներու եւ մարգարէութեան գիրքը: Հեռվդես դիտելով մը լուռ, անհանգիստ՝ նստած տեղը, Յիսուսի կը նայի: Յիսուս կանգնեցուցած են դահլիճի մէջտեղը. չի տեսնուիր: Հեռվդես կը դառնայ քահանայադէսներուն) *ԻՆչ է ձեր դատը:**

Ա. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ - *Տէր իմ, այս մարդը, որ Յիսուս անունով կը ճանչցուի, ժողովուրդի ամբաստանութեան տակ է: Գալիլիացի ըլլալուն Պիղատոս կուսակալը ըսաւ, Հերովդէս իշխանին կ'իյնայ դայն դատել ու դատապարտել:*

ՀԵՐՈՎԳԻԵՍ - *ԻՆչ ամբաստանութիւն ունիք անոր դէմ:*

Ա. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ - *Տէր իմ, այս մարդը մեր ժողովուրդը կը մոլորեցնէ, կայսրին Հարկ տալ կ'արգիլէ... Նաեւ կ'ըսէ, ինքը Հրէից թագաւոր է... եւ Հետեւորդներ այ ունի.*

ՀԵՐՈՎԳԻԵՍ - *Հրէից թագաւոր:*

Բ. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ - Միայն այդ չէ. նաև մեր ծէսերուն ու օրէնքներուն դէմ կը քարոզէ, նոր օրէնքներ հաստատել կ'ուզէ:

Գ. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ - Առանց քաշուելու կ'ըսէ, ինքը մեր Մեսիան է, Աստուծոյ որդի է և Աստուած է... Աշխարհի ստեղծուելէն մինչև այսօր մէկը այդպիսի հայհոյութիւն չէր ըրած:

Ա. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ - Երբ մէկը ինքզինքը Աստուած կը յայտարարէ, ատկէ սուկի ծանր հայհոյութիւն և մեղք չի կրնար ըլլալ... Մանաւանդ որ մարդիկ ինչպէ՞ս կարող են Աստուած տեսնել և ողջ մնայ:

ՀԵՐՈՎՂԷՍ - Ինչո՞ւ:

Ա. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ - Մարդիկ չեն կրնար Աստուծոյ դէմքը տեսնել ու ապրիլ. Աստուած ինք այդպէս ըսած է:

ՀԵՐՈՎՂԷՍ - Որո՞ւ ըսած է:

Ա. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ - Մովսէսի. (Գիրքը կը բանայ ու կը կարդայ) Տէրր այս խօսքերը Գերբոր լերան վրայ կրակի, ամպի և մառախուղի մէջէն Մովսէսի ըսաւ. «Դուն իմ երեսս չես կրնար տեսնել, վասնզի մարդ չի կրնար զիս տեսնել ու ապրիլ... » (Գիրքը կը գոցէ) Մինչդեռ մենք բոլորս այս մարդուն կրնանք նայիլ, և ունէ բան չենք զգար...

ՀԵՐՈՎՂԷՍ - Բայց... կ'ըսեն շատ հրաշքներ գործած է. կարելի է որ, ձեր Մեսիան է...

Բ. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ - Թէ և հրաշքներ կը գործէ, բայց Մեսիան չէ:

Գ. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ - Մենք վստահ ենք, ասիկա Մեսիան չէ:

Ա. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ - Մաղաքիա մարգարէն գուշակած էր այս մարդուն մասին:

ՀԵՐՈՎՂԷՍ - Ի՞նչ ըսած է ձեր Մաղաքիա մարգարէն:

Ա. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ - (Գիրքը կը բանայ, կը կարդայ) Ըսած է, Մեսիան գալի առաջ, մէկը պիտի ելլէ, որ ձեզի հրաշք ու նշաններ ցոյց պիտի տայ. անոր խօսքը մտիկ մի ընէք...

ՀԵՐՈՎՂԷՍ - Լաւ, դուք ալ անոր խօսքը մտիկ մի՛ ընէք:

Ա. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ - Մաղաքիա մարգարէն նաև ըսած է. (Կը կարդայ) եթէ այդպիսի մէկը ձեր մէջ գայ, այդ մարդը անպատճառ պէտք է մեռցուի...

ՀԵՐՈՎՂԷՍ - Ձեր Մաղաքիա մարգարէն այդպէ՞ս ըսած է:



ՉԱՅՆԵՐ - (Դահլիճն) Այո՛, այո՛...

Ա. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ - Այո՛, Տէր իմ, այդպէս ըսած է. ահա՛ գրուած է օրէնքներու եւ մարգարէութիւններու գրքին մէջ:

Պահ մը լռութիւն:

ՀԵՐՈՎՂԷՄ - Ուրեմն, ի՞նչ կ'ուզէք որ ընեմ այս մարդուն:

ՉԱՅՆԵՐ - (Դահլիճի մէջ գնտողները) Պէտք է խաչուի, պէտք է խաչուի...

Բ. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ - Պէտք է խաչուի, մենք վստահ ենք՝ Մաղաքիա մարգարէն ասոր համար ըսած է, պէտք է մեռցուի, որպէս սգի կատարուի մարգարէութիւնը... (Պերսիստ կը խնդայ... Հերովդէս նստած սեղը անհանգիստ, ոտի կը կանգնի):

ՀԵՐՈՎՂԷՄ - Կարելի է, ձեր Մաղաքիա մարգարէն ուրիշ մէկուն համար ըսած է այդ խօսքերը, եւ այս մարդը ձեր Մեսիան է:

Գ. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ - Ասանկ Մեսիա չի ըլլար, ուտող, խմող ու արբեցող:

Բ. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ - Մեսիան չէ, մենք շատ լաւ գիտենք որ Մեսիան չէ...

Ա. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ - Մեսիան այդպէս չպիտի գար...

ՀԵՐՈՎՂԷՄ - Ինչպէ՞ս պիտի գար:

Ա. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ - Ան բոլորովին տարբեր պիտի գայ... (Պերսիստ նորէն կը խնդայ):

Բ. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ - Տէր իմ, մենք այստեղ մարդ ունինք որ լաւ կը ճանչնայ զինք: (Կը կանչէ) Բենիամին՛ն, եկո՛ւր ու ըսէ Հերովդէս իշխանին, թէ ո՞վ է այս մարդը:

ԲԵՆԻԱՄԻՆ - (Կը մօտենայ) Տէր իմ, ասիկա մեր Հիւսնի որդին է. անոր մայրը Մարիամ կը կոչուի, ասոր եղբայրները Յակոբոսը, Յովսէփը, Սիմոնը եւ Յուդան շատ լաւ կը ճանչնամ: Զինք այ կը ճանչնամ, աշխատիլ չուզելուն համար տունէն փախուցին... քոյրեր ալ ունի...

Ա. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ - Տէր իմ, կը լսե՞ք, այս մարդը ոչ Մեսիա է եւ ոչ աստուած...

Պահ մը լռութիւն:

ՀԵՐՈՎՂԷՍ - *Պալիլիացի Յիսու՛ս, ի՞նչ բսկիլք ունիս այս բոլոր  
ամբաստանութիւններու դէմ... (Լաուրիսն): Ճի՞շդ է, կ'ըսեն,  
դու ժողովուրդին մէջ խռովութիւն կը սերմանես եւ կայսեր ու  
երկրի իշխանութեան դէմ ամբաստանութիւն կը քարոզես...  
(Լաուրիսն): Ճի՞շդ է, կ'ըսեն, դուն քեզ հրէից թագաւոր յայտա-  
բարած ես... (Լաուրիսն): Կ'ըսեն, բսած ես, Մեսիա, Աստուծոյ  
որդի եւ Աստուած ես: Ճի՞շդ են այս բոլոր ըստածները (Լաու-  
րիսն): Տե՛ս, քու ժողովուրդդ քու դէմ կը վկայէ. պատասխանէ  
անոնց... (Լաուրիսն): Զարմանայի՛ Հ: (Կը դառնայ իր քով գնդապետ-  
ուն): Այս մարդը հա՞մը է:*

Ա. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ - *Ես ականջներովս լսած եմ անոր քարոզելը,  
համը չէ, խորամանկ է...*

ՀԵՐՈՎՂԷՍ - *Ինչո՞ւ չի խօսիր:*

Բ. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ - *Իր յանցաւոր ըլլալը գիտէ՛:*

ՀԵՐՈՎՂԷՍ - *Ոտէ՛, ինչո՞ւ չես խօսիր... Ձե՛ս գիտեր՝ ես իշխա-  
նութիւնը ունիմ քեզ խաչը հանելու եւ իշխանութիւնը ունիմ  
քեզ անպարտ արձակելու ...*

ՁԱՅՆԵՐ - *(Գահիլիձն) Ուաչը հանէ՛... խաչը հանէ՛...*

ՀԵՐՈՎՂԷՍ - *(Նեղացած) Զայներնիդ կտրեցէ՛ք... (Յիսուսի)  
Մա՛րդ, պատասխան մը տուր. լսէ՛, բոլորը քեզ դէմ կը վկա-  
յեն, պաշտպանէ՛ դուն քեզ ...*

Լաուրիսն:

ՍԱՍՍԷ - *(Կողմնակի Հեռովիլէսի) Ըսէ՛, հրաշք թող գործէ. շատ կը  
փափաքիմ տեսնել հրաշքը ինչպէս կ'ըլլայ... Ահա՛, այնտեղ  
կոյր մարդ մը կանգնած է, լսէ՛, հրաշքով մը անոր աչքերը  
բանայ...*

ՀԵՐՈՎՂԷՍ - *(Յիսուսի) Եթէ խօսիլ չես ուզեր, գէթ հրաշք մը գոր-  
ծէ, նշանով մը ցոյց տուր այն Աստուածային կարողութիւնը,  
որ բսած ես թէ ունիս... (Պահ մը խոր լռութիւն, ու մէկէն ամբողջ  
դահլիճը խնդումի ու ծաղրանքի ձայներով կը լեցուի): Զրկա՞յ այս  
մարդը խենթ է ...*

Ա. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ - *Խենթ չէ:*

ՀԵՐՈՎՂԷՍ - *Հապա ի՞նչ է:*

Ա. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ - Ասանկ մարդ մըն է ...

Լուսին:

ՀԵՐՈՎՂԵՍ - Կ'ըսէ՞ք հետեւորդներ ունի. ո՞ր են անոնք:

ՉՕՐԱԿԱՆ - Երբ զինք բռնեցինք, բոլորը փախան:

ՀԵՐՈՎՂԵՍ - Բոլո՞րը ... Ներկաներուն մէջ Հա՞տ մ'ալ չկայ:

ՉԱՅՆ ՄԸ - (Դահլիճին խորհն) Կա՛յ, ահա այն մարդը, զրան քով  
կանգնած է:

ՀԵՐՈՎՂԵՍ - Ո՞ր է, Հոս թող գայ, թող մէջտեղ գայ, Հարցում-  
ներ ունիմ ընկիք ...

Դահլիճին մէջ իրարանցում:

ՉԱՅՆԵՐ - Փախաւ ... փախաւ ...

ՉՕՐԱԿԱՆ - Ան ալ փախաւ ... (Խնդալու ձայներ):

ՀԵՐՈՎՂԵՍ - (Պահ մը լուռ... կը դառնայ դէղի ստահ) Այս խնդիրը  
չատ լուրջ ու ծանր խնդիր է. ոեւէ որոշում տալէ առաջ պէտք  
է լաւ մը խորհիլ... Քուգա՛, գոցե՛, վարագոյրը ու ըսէ թող  
սպասեն: (Քուգան կը գոցէ վարագոյրը ու դուռս կ'ելլէ): Դուք այս  
խնդրէն բան մը հասկցա՞ք. ես բան չհասկցայ... Այդ մարդու  
բերնէն բառ մը իսկ լսելը անկարելի է, իսկ միտները գազան-  
ներու նման կատողեր են ...

ՉԱՅՆԵՐ - (Դահլիճէն) Հրաչք մը գործէ, Հրաչք մը գործէ: (Խորն-  
դում):

ՀԵՐՈՎՂԵՍ - (Ինճն իրեն) Մա՛րդ, կ'ըսեն Հրաչք կրնաս գործել.  
ասկէ լաւ ժամանա՞կ, փառաւոր Հրաչքով մը անոնց բերան-  
ները պապանձիլ չտա՞ս ...

ՀԵՐՈՎՂԻԽԱՏ - (Իր անկիւնէն) Դուռն թեղ մի նեղեր, ըսէ տանին խա-  
չեն:

ՍԱԼՕՄԷ - Ազատէ անոնց ձեռքէն, Հետեւնիս Գալիլիա տա-  
նինք ...

ՀԵՐՈՎՂԻԽԱՏ - Ի՞նչ կ'ըսեն աղջի՛կ, խենթացա՞ր ...

ՍԱԼՕՄԷ - Ինչո՞ւ կը վախնաս, մի՛ վախնար, այս մարդը Յով-  
հաննէսը չէ ... մեղի հետ Գալիլիա տանինք, խնճոյքներու ա-  
տեն Հրաչքներ կը գործէ ու մեղ կը զուարճացնէ ... Կ'ըսեն Հի-

ւանդներ կը բժշկէ. երբ հիւանդանանք, մեզ կը բժշկէ... Ըսենք՝ գլխուդ ցար թող բժշկէ:

ՀՆԲՈՎԴԻԱՏ - Ձեմ ուղեր, այդ մարդը պէտք է խաչուի, այդ մարդը փտանգաւոր մարդ է...

ՀՆԲՈՎԴԻԱՏ - Այս գործին մի խառնուիք. դուն անգամ մըն ալ պատճառ եղար անմեղ մարդու մը զլսատուելուն:

ՋԱՅՆԵՐ - (Գահիլձէն) Պէտք է խաչուի... պէտք է խաչուի...

ՀՆԲՈՎԴԻԱՏ - (Պերսիսէի) Անոնց լսէ՛. չեն ալ վախնար, կրնայ եղած ըլլայ, որ այս մարդը խկապէս սուրբ մարդ է:

ՊԵՐՍԻՏԵ - Ինչո՞ւ պիտի վախնան, երբ մէկը կ'ըսէ, ապտակ մը դարնողին միւս երեսդ ալ դարձուր, ալ անկէ ինչո՞ւ վախնան:

ՀՆԲՈՎԴԻԱՏ - Այդպէ՞ս ըսած է:

ՊԵՐՍԻՏԵ - Իր Հետևորդներուն այդ կը քարոզէ... Եթէ փոխանակ մեռելները կենդանացնելու, ապրող մը մեռեալ դարձնէր մէկ խօսքով, եթէ փոխանակ կոյրին տեսնել տալու, տեսնող աչքերը կուրցնէր խօսքով մը, եթէ փոխանակ անդամալոյծ ոտքի կանգնեցնելու, ոտքի վրայ պտրտող մը անդամալոյծ ձգէր, եթէ փոխանակ զեւեր հանելու, մարդ մը դիւահար ընէր, այն ատեն տարեր կ'ըլլար...

ՀՆԲՈՎԴԻԱՏ - Այն ատեն ի՞նչ կ'ըլլար...

ՊԵՐՍԻՏԵ - Այն ատեն այդպէս չէր ըլլար...

ՀՆԲՈՎԴԻԱՏ - (Պահ մը կը խորհի) Կարծեմ, այս մարդը ետ Պիղատոսի զրկեմ. չեմ ուղեր ասանկ խնդիրներու խառնուիլ... (Կը դառնայ դեղի գահիլձը, վարագոյրը կը բացուի, լուսին մը կը սիրէ): Ես այս խնդրին չեմ խառնուիլ, ետ Պիղատոսին տարէք. Պիղատոս իր ուղած օրէնքներով ու իր ուղած ձևով թող դատէ: Ես այդ իրաւունքը Պիղատոսի կու տամ...

Յիսուսը առած, աղաղակներով կը հեռանան:

ՋԱՅՆԵՐ - (Հեռուն կը լսուի) Պէտք է խաչուի՛... պէտք է խաչուի՛...

Հերովդէս կու գայ ու կը նստի հանգստարանին վրայ:

ՊԵՐՍԻՏԵ - Անպատճառ պիտի խաչեն:

ՀԵՐՈՎԴԷՍ - Բայց, ես խաչելու հրաման չտուի, Պիղատոսի դրրկեցի, եթէ ուզէ՝ Պիղատոս կրնայ ազատ արձակել...

ՊԵՐՍԻՏԵ - Պիղատոս ազատ արձակէ կամ ոչ, նորէն պիտի խաչեն:

ՀԵՐՈՎԴԷՍ - Որո՞նք:

ՊԵՐՍԻՏԵ - Հրեաները... քիչ առաջ խնդուքս չկրցի դսպել, երբ անոնք քեզի կ'ըսէին, թէ այս մարդը վտանգաւոր է եւ խռովութիւն կը սերմանէ...

ՀԵՐՈՎԴԷՍ - Սո՞ւտ կը խօսէին:

ՊԵՐՍԻՏԵ - Իրականութիւնը ըսածնուն հակառակն է:

ՀԵՐՈՎԴԷՍ - Ինչպէ՞ս թէ հակառակը:

ՊԵՐՍԻՏԵ - Հրեաները զիշեր ցերեկ Եհովային կ'աղօթէին եւ անհամբեր կը սպասէին մարգարէներէն իրենց խոստացուած Մեսիային, որ պիտի գար զիրենք գերութենէն ազատելու եւ թագաւոր ըլլալու իրենց: Երբ կը տեսնեն մէկը որ կ'ըսէ, թէ ինք Մեսիան է, եւ կ'ըսէ, եկած է, չէ թէ միայն հրեաներուն համար, այլ ամբողջ մարդկութեան, չէ թէ հրեաներու թագաւոր ըլլալու, այլ ամբողջ աշխարհի մէջ երկնային թագաւորութիւն մը հիմնելու...

ՁԱՅՆԵՐ - (Դուռէն) Պիտի խաչեն... պիտի խաչեն... (Բռնորի ուշադրութիւնը կը դառնայ դէղի դաստիանը):

ՊԵՐՍԻՏԵ - Պիտի խաչեն:

\*\*\* 6

ՁԱՅՆԵՐ - (Դուռէն) Խաչեցին... խաչեցին...

ՊԵՐՍԻՏԵ - Խաչեցին...

\*\*\* 6

ՁԱՅՆԵՐ - (Դուռէն) Մեռա՛ւ... Մեռա՛ւ...

ՊԵՐՍԻՏԵ - Մեռցուցին... (Պահ մը լռութիւն... Պերսիսէ կը խնդայ)  
Վաղը մարդիկ պիտի մոռնան բոլոր Աստուածները ու Յիսուսական ըլլան...

ՀԵՐՈՎԴԷՍ - Ինչո՞ւ:

ՊԵՐՍԻՏԵ - Մարդիկ պիտի ուզեն պաշտել Աստուած մը, որմէ ի-

*րենք աւելի դժբաւոր են...*

Լուրին:

*ՀԵՐՈՎԴԷՍ - (Կը դառնայ Երաստսի) Գրէ՛, Երաստոս, գրէ, Երու-  
սաղէմի մէջ մարդիկ Աստուած մը մեղցուցին:*

ՎԵՐՁ

# ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

[Տե՛ս էջ 193-194 ]

## ԽԱՂԻ ՄԱՍԻՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՄԵՋ քասերակը, խսացուած ու խոհուն յուզականութեամբ, միաձուլելով Սուրբ Գրոց եւ ժողովրդական ասանդրփինները, տղատաղաց ու խորհրդաւոր զոտող միջոցներով, գործողութեան ընթացքի մէջ է դնում Յովհաննէս Մկրտչի գլխասումից յետոյ, Հերովդէտի դալասի մէջ տիրող անց ու դարձը: Յիսուս Նազովրեցու ձերբակալութեան, դասադարձութեան ու խաչելութեան դասունը բեմ է հանուած ոչ թէ նրա մարմնի նիւթական դասկերումով, այլ հանդիսասեսի հայեացքից դուրս դաւանած, նրա «ներկայութեամբ»: Նշուածը, զօրեղ դեր ունի խաղի խորհրդաւոր ներհայեցողական ընթացքը կերտելու մէջ: Թատերկը ասարսում է՝ «Յիսուս Նազովրեցի Թագաւոր Հրէից»-ի անեսասնելի խաչելութեամբ ու դալասի մէջ գրչին յանձնուող, «Հերովդէտ Թագաւոր Հրէից»-ի, ներկայ վկայութեամբ:

Գրուել է 1929 թուին, Փարիզ: Առաջին անգամ տղագրուել է Բոսոն՝ ՀԱՅՐԵՆԻՔ ամսագրի մէջ (Փետ., 1930): Չի բեմադրուել:

Արտատում է ՀԱՅՐԵՆԻՔ ամսագրից:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

- 1) **ՀԵՐՈՎԴ ԴԷՍ** - Որդի Մեծ Հերովդի: Հօր մահից յետոյ Օգոստոս Կայսեր կողմից՝ կարգուեց չորրորդակէ Գալիլիայի եւ Պերէայի: Դրա բերումով ընդհանրադէս կոչուել է թագաւոր: Առաջին կինն էր Արաք Թագաւոր՝ Արեսայի դուստրը: Միրահարուելով եղբօր՝ Փիլիպոսի կնոջը Հերովդիասին, ու միաժամանակ միտ եղբօր՝ Արիստրոտելայի դուստրն էր, լրեց կնոջը, սխիղեց Հերովդիասին թողնել ամուսնուն եւ կաղուեց նրա հետ: Հետեող ու բարեկամ էր Սաղովեցիների աղանդին: Հերովդէտ, գլխասել տուեց Յովհաննէս Մկրտչին [Տե՛ս էջ 195 եւ ՆԿ, ԱԻ ըստ ՄՏԹ., ԺԳ/1-12. ՄՐԿ., Զ/14-29]: Յիսուս Գալիլիացի լինելով ենթակայ էր նրա իշխանութեան:
- 2) **ՀԵՐՈՎԴ ԴԻԱՏ** - Թող Հերովդ Մեծի [Տե՛ս Ծանօթ. 1]: Հերովդիասի բելադրութեամբ դուստրը՝ Սալօմէ, Հերովդէտի համար դարելուց յետոյ, իբրև

ընծայ ուզեց Յովհաննէս Մկրտչի գլխասուած գլուխը: Վերջինս յանդիմանում էր Հերովդէսին, Հերովդիասին իր կիները դարձնելու համար:

3) **ՍԱԼՕՄէ** – Հերովդիասի դասը: Մօր դրոմամբ, Հերովդէսից ուզեց Յովհաննէս Մկրտչի գլուխը [Տե՛ս Ծանօթ. 1 և 2]: Դէտքը յիշուած է Սուրբ Գրոց մէջ, սակայն ոչ նրա անունը: Անուամբ նշուել է հրեայ դասմագիր՝ Յովսէփ ԲՆ Մաքաֆայի/Յովսէփոս Փլավիոս/ (38-100) ՀՐԵԱԿԱՆ, ՀՆԱԽՕՍՈՒԹԻԹԻՆ աւշխասութեան մէջ (հաս. XVIII: 5, 4):

4) **ՊԻՂԱՏՈՍ** – (Պոնսացի) Հրոմի կուսակալ Հելասանում (26-36): Երբ Յիսուս դասադասուեց հրեայ փահանայադէսի եւ ժողովի կողմից, արուեստից Պիղատոսի առջեւ: Նկատելով նրա անմեղութիւնը՝ Պիղատոս փորձեց ազատել նրան, սակայն յետոյ, տեղիք սալով կղերականների հակադրութեան, «ձեռք լուաց» ու հարցը ամբողջին յանձնեց [Տե՛ս ՆԿ, ԱԻ ըստ ՂԿ., ԻԳ/125, ՅՎՀ., ԺԸ/18-40, եւ ԺԹ/1-42]: Տեղացիների կողմից ասուած՝ երբ Հրոմ վերադարձաւ, Կալիգուլա կայսրը նրան անտրեց Վիլենա, ուր եւ անձնատղան եղաւ:

5) \*\*\* – Այս նշանաբանով, Քրիստոսի հոգեվարքը հաղորդելու համար, հեղինակը գործողութեան ժամանակը իր բնական ընթացքից հանելով, ենթակայ է դարձնում դայմանական վիճակի: \*\*\*-ի մէջ առնուած բաժնից առաջ եւ յետոյ գտնուող գործողութիւնները, ընթանում են ժամանակի բնական ընթացքով, իսկ միջանկեալ՝ խաչելութիւնն ու մահը, ներկայացուած են դայմանական ձեւով՝ խստացուած խորհրդանշական ժամանակի մէջ: